


241



Հ Ի Ն Հ Ա Ի Ա Տ Ք Հ Ա Յ Ո Ց



ՊԼ. Գ. - ԱՌԻՍՏՈՒՐԱՐԱՅ ՓՈՒՇՏՈՆ. - Բ. ԱՌԻՍՏՈՆ

(Տես յէջ 193)

Բ. ԱՌԻՍՏՈՆ. — Ինչ որ ի սկզբան Արե-
զական համար բարեք, ըստ Ս. գրոց և բը-
նական տեսութեան մարդկան, անմիջապէս
զնոյն կ'իմանամք և Լուսնի. զի որպէս զնա
կարգեց Աստուած ի Լուսատու տուրնջեան, և
սա կ'ըսուի Լուսատու գիշերոյ (Ծրնդ. Ա. 16).
ստոնց անուանք և յիշատակք իբրև խեղեփք
(Չուխակք) են ի հասարակաց միաս. իսկ
առ թերամիտս ոմանս՝ ոչ շատ օտար էր ըզ-
Լուսին Արեւոս քոյր անուանելն, և անոր
պէս ի պաշտօնս առնուլն. որ թէ և Արեգա-
կան չափ մեծ և հզօր օդուս չի սար մարդ-
կան, այլ ունի և շատ առակելութիւններ,
թէ անմիթար մթութեան մէջ մտորելոց ճամ-
բայ ցուցընելով ի ծովու և ի ցամաքի, թէ
իր արծաթափայլ դիմօք և նշողիւք զուարճա-
ցընելով զաշա, և գրաւելով զգրտ՝ քան զա-
րեգակն՝ որ զմիտս գրաւէ. թէ զարձեալ, ա-
ւելի քան զնա աւուրց և ամաց մանր չափե-
րով, և չորքամասնեայ անմամբն և նուազմամբ
ծնեղեաւոր և չրմամբ 1. և թէ կենաց ներ-

քին անտեսութեան (առողջութեան) փոփոխ-
մանց ազդելով, մանաւանդ կանանց վրայ. և
թէ և ոչ նոյնչափ ստոյգ ըլլայ՝ այլ հասարակ
կոյուսն եղած է ծանօթ արտի՝ Լուսնոտու-
րեան, որով բռնուողն կոյուի, Լուսնահար,
Լուսնածեռ. որպիսիներ բժշկեց՝ ոչ զեզով
այլ բանիւ և հրամանաւ՝ ամենարժիշկն և
ամենողորմած Տէրն մեր Քրիստոս. օտար
լեզուաց մէջ այլ նոյնպէս կոյուի հասա-
րակօրէն (Lunatique). Տարբեր արտակիր
երեւի Լուսնագանչկն իբր լուսնէն պտածառած
ուղեղի նուազութեամբ. — Բուսոց վրայ այլ
հանդարտ ազդեցութեամբն՝ առիթ եղած է
Լուսնի ընծայելու զոմանս, կամ իր անուամբ
կոչելու, ինչպէս առ մերս՝ Լուսնի քոռփ,
(Ղուլփի Ղամար կամ Ղուլ Բաղամբար՝ ըստ
Արաբաց, հասարակօրէն Zédoire առ արեւ-
մըտեայս). որոյ « Տերեւն՝ զհետ Լուսնին ըն-
» թանայ, (զրեն աղթարք և բժշկարանք մեր,
» և ըստ աւուրց Լուսնի) տերեւ ստանայ, և
» սասն կերպիւ հնգետասանօրեայ Լուսնին՝

1. Մեր Հին առմարագրաց մէկն Լուսնի քա-
ւորչներն այլ կրեւելով ութ բաժին գրէ, այս-
պէս. «Նախամահկ. Զինի Մահկի վեց. Երկ-

րորդ կտուր յեռ. Կորլնթի յեռ. Մալուսն ի
նոյն զիջական, Բովանդակ Լուսնի. Լիպուսնի.
Նախերկակտուր (Կոր)ընթի յեռ. »

» (լինի) . Լուսնի ընծայելուն կամ անոր հետ կերպով մի կապելուն մէկ պատճառն կ'երեւի՝ իրեն չորս զոյն օւնենալ կամ փոխելն , ըստ չորս կերպարանայ Լուսնի : — Այսոր նման՝ թէ ոչ նոյն՝ է և Լուսնի ծաղիկն , պարզապէս Լուսնի կոչուած յԱրարաց , Ղաւկն . որոյ համար կ'ըսեն բժշկարանք , թէ « Տերեւն կարմիր » յորդան գունով (լինի) , և ի վերայ գլխուն՝ » զեղնագոյն ծաղիկ , և տերեւք նորա զհետ » Լուսնի ընթանան . զի առաջին օրն Լուսնի՝ » մէկ տերեւ ստանայ , և երբ Լուսինն փչէ » (վերջին քառորդ) նորա տերեւքն թափին , » և զիր ծաղիկն ի վրայ գլխուն պահէ . և » հանապաղ այդ է իւր ընթելինն . ի նոր » սկսանելն՝ տերեւն արձակէ , և ի բուսանելն՝ » մին մին թափի » : Յիշուած է և Լուսնու նոս ծաղիկ , բայց ինչպիսութիւնն անծանօթն . — գուցէ նոյն և Լուսնատակի ծառն , որ և լուսնատակ , այն է Romarin ըստ ֆրանսկաց : Լուսնի թուփէն զատ կոչուած է և Լուսնի քար , ըստ Արարաց (Հանար ըլ—Ղամէր) , և թուփ տարբեր ի Լուսնաքի , զի ոչ Լուսնի՝ այլ Լուսոյ անուամբ է սա , և ըստ այսմ կոչի յԱրարաց Հաճար հե—նոր ¹ :

Կանխեցինք այս մանր և երկրորդական կամ հետեւորդ բաները յիշեցընելու , որ զիւրա հակերցուի Լուսնի հաւասար և պաշտօնն , կամ՝ միջնորդն և ճամբան Լուսնապաշտութեան . որոյ՝ յառաջ քան զանձնակերպ պաշտօնն՝ այսպիսի զիտողութեամբք և զզացմամբք՝ մտած կամ հետեւած է Լուսնագիտութեանն որով և Լուսնախորհրդ կամ Լուսնահանայք : Ինչպէս հասարակօրէն ամենայն

1. Արեգական նիւթ ու կերպարանքը ստորագրողն (196) գրէ և Լուսնի համար , թէ « ի հինգ մասնէ ստեղծու , երեքն լոյս է , մինն » հուր , միւսն՝ գնացողութիւն ի բանէն . Աստուծոյ . . . Գանի նիւթ է ամանակի Լուսնին՝ » որ կայ բաղադանեալ . Ող է ամպանէ , լուսառ կերպ , թանձրամած , և ի նմա պատուհանք » և ձերկացողիք , որոց վեցն յերկինս հային և » վեցն յերկիրս : — Չինչ կերպարանք են Լուսնին . — Են ի նմա իբրև երկու գոմէշս ծուկայինք . ընդ միոյն բերանն մտանէ լոյսն և » ընդ միոյն պակասի . քանզի լոյսն Լուսնի յարեգականէ ծագի » , և այլն :

լուսաւորաց քննութիւնն և նշանակութիւնն ի սկզբան աւելի կամ պակաս բուն զիտութիւն եղած է , և յետոյ աւելի ազիտաւար մտորութիւն , այսպէս և Լուսնի քան զայլ լուսաւորս զիւրա ճանչցող փոփոխութիւնք՝ ստոյգ և հարկաւոր զիտութիւնն եղած են . այլ երբ օտաւ ընդ ճշմարտին խառնուեր է՝ Լուսնագիտութիւնն այլ Աստեղագիտութիւնն այլ՝ անուամբ ուղիղ՝ բայց բացատրութեամբ մոլոր և ազանդ դարձեր և զայս նշանակեն . և շատ տեսակ հմայութեանց և կախարդութեանց մէկն այլ՝ ոչ միայն եղած է Լուսնահմայութիւնն , այլ և զրեթէ հասարակաց առ ամենայն ազգո : Եւ որ աւելի զզային է՝ միշտ և մինչեւ հիմայ իր հաւատացեալքն կամ խաբեբայքն ունի . ինչպէս թուրքոյ աշխարհաց . իսթամուտ ժողովրդոց մէջ ծանօթ են այդպիսի հմայոցք , իրենց բառիւ Լուսնագիտ կոչուած (Այ—պազար) , զորս յիշելն անգամ թերեւ աւելորդ էր , եթէ զգաղղաբար զեւ մերազգի բրիտաննէից մէջ . այլ չգտուէին այսպիսիք , որք զրուած կամ անգիր Աղբարօք և պէսպէս Գրասանակօք և թուաբանական Լուսնացոյց և Իփիսկրտես գրութք , չհետեւէին իրենց մոլոր նախնեաց , որք Լուսնահանայք կոչուին . « որ զօրն՝ չար և բարի » ասէ՝ Լուսնոյն » , ըստ բացատրութեան վարդապետի միոյ յՅի գարու , որ՝ ինչպէս և իրմէ առաջ և ետեւ՝ զանոնք յանդիմանող և խրատող եղած են :

Ասոնցմէ աւելի հետաքննելին է մեզ յայտնի Լուսնապաշտն . զոր և տեսանք ընդ Արեւապաշտին , հանդերձ իր անդրեօք կամ պատկերօք Հայկազանց և Արշակունեաց աստեն (եր . 195) : Ինչ կերպ էր Հայոց պաշտած Լուսինն . — աւելի անծանօթ է մեր , ըստ որում և նուազ է Լուսինն քան զԱրեւ , բայց գուցէ իր պաշտօնն հնագոյն և ժամանակակից Քաղղէութեան . կարծիք է Ս . զրոց մեկնչաց՝ թէ նոյն իսկ մեր ազգի կամ երկրի անունն ըստ օտարաց , Ար—մենի կամ Ար—միենի , երբայերէն՝ Լեւոն Լուսնի նշանակէ , իրբ թէ լերանց վրայ Լուսնի զիւրողք եղած ըլլան՝ յիշեալ զրակից Քաղղէից ² :

2. Ըստ այսմ՝ Խոսլ Նոր հեղինակ մի Պիւթա .

նման . և իրենցմէ այլ ինչպէս շատ ուրիշ ազգայնք Մեն կոչուի Լուսինն, որպէս կոչուի և անձնաւորեալն կամ շատուածն, Միջ ըստ Յունաց, Men, Mena, Mene, որ և Ամիս նշանակէ : Ինչպէս բառի այս մերձաւոր ձայնով լեզուս յունաւատին ազգաց, Միջոյ կամ Միջոս, և Անգղիացիք հիմայ այլ Մուն Moon կոչեն զԼուսինն : Այս Մէն անուամբ Յոյնք քանի մի Լուսնական շատուած ունէին, ոմն արական, ոմն իգական, ինչպէս առ Գերմանացիս արական է Լուսին նշանակող անունն (der Mond), մինչ Արեւն իգական, (die Sonne). հաւանօրէն Հայոցն արական էր նման Լատինաց Lunus շատուածոյն, որ և փոխաբարտայն այլ կերպարանաւերով՝ աւելի հաւանաբուն է ի Հայոց և Փոխաբաց անուած ըլլալ, որոց ցեղակցութեան կամ իրարմէ ծագման մկայած են հին պատմիչք. և շատ հաւանական է որ Փառնակ կոչէին Հայք իրենց Լուսին շատուածը, ինչպէս և կոչուէր ի Վրաստան և ի Պոնտոս՝ իրենց դրացի երկիրներում. բայց մեր լեզուին սեպհական է այդ անունն : և այսպէս համարիմք՝ մինչեւ որ ստուգուի Փոխաբացոց լեզուին նոյնութիւնն կամ տարբերութիւնն : — Հաւանական է գարձեալ և Լուսնակ կոչիլն ի Հայոց, զտարականն յատուածականն զանազանելու համար. և նշանաւոր զուղակցութիւն մի է՝ որ Եւրոստացիք՝ իտալիոյ մէկ մասին հին բընակիչք՝ յարեմսեան Ասիոյ եկած (զոր հի-

մայ ոմանք ի գիտնոց ջանան ցուցնել ազգակից կամ ծայած ի Հայոց) Լուսնա կոչած են զԼուսինն. — Մեր ամկորէն Լուսնակց կոչուած՝ Լուսնի պայծառ ծայղը նշանակէ :

Եղբրեաձեւ, մանեկաձեւ, կարակնաձեւ կամ նաակաձեւ Լուսինն (որպէս և իր պատկերաց մէջ կերպարանէին գուլբը), Մահիկ կոչուի առ մեզ, ըստ ծանօթ Պարսից Մահ կամ Մահի բառից, որ նշանակէ ըլլալու և զամիս. որոյ ձեւէն երեւի և Մեննանց զարդն. բայց մեզի աւելի քննական է մեր Մենեկի կամ Մենեկան անունն ամսոյ, որ անմիջապէս հետեւի արեւանիչ Արեւ ամսոյ, երբ ըստ ուղղագոյն տուամբի կամ օրացուցի՝ բնական տարին այս ամսով սկըստին, Մենեկանն այլ վերջին ի ըլլայ, որով և մերձաւոր նոր տարւոյ : Ի յիշատակի անուանց ամսոց պիտի յիշենք զարձեակ զայս, ինչպէս յետոյ և զՄենեան անուն պաշտաման տեղեաց՝ որ ձայնակից է Մահիկ և Մենեկի :

Այս երկու՝ աչք ու միջք հրապուրող մեծ Լուսաւորները թողլու ատեն, յիշենք հաճութեամբ՝ որ մեր նոր սուրբ կօնքն՝ զմին (Արեգակն) Գրիստոսի նուիրեր կամ նման ցուցեր է. զմիւսն (Լուսին) իւր անմասն Մօր և մեր Տիրամօր. որոյ՝ երկուքն միանգամայն սեփականէ մեր շարական երգիչն, « Սրբորհի, ի Լիբանանէ գիմեալ հարսն զգեցեալ, զԱրեգակն արկեալ զքեւ, և ընդ ոտիւք զԼուսինն ստուերաստեակ » :

զորոսի ուղեւորութեան վիպասանական պատմիչ, երգելտայ Քաղղէացոց. « Ո՛վ Լուսին, բնա » կիւք աշխարհին Հայոց որ մեր հին նախահարքն » էին, նուիրեցին քեզի յեւ մի և պարտու. և » կու ստորին քու անուամբդ կոչուելու » : — Արդեօք Մահի՛ Էր այն լուսն՝ զոր քրիստոնէսոց հարք մեր յետոյ նուիրեցին Հոսիփոսմանց ընկեր Ս. Մանի կուսի : — Լակաստտիոս (Ը, ԺԷ) այլ կ'ըսէ, թէ չեմք ընդունիր գանձք, որ ի կու՛մբա լերանց լուսաւորաց ընթացքն և նշանները գիտելով՝ բիրաւոր տարիներու յիշատակութիւն կ'ընեն :

1. Այս Յունաց Միկի լուսնադից պայտօնեայք կոչին Միոպոցտաւ. արդեօք այս անունն ունի՞ յարձեւութիւն ընդ Մահանիք մեր և ընդ Մենուիք Պարսից, թէպէտ սղաք՝ զբարտապէս կամ զբարտապեղ թարգմանեն այդ անունը :

Գ. ԱՍՏԵՂՔ. — Եթէ Արեգակն և Լուսնի՛ մեր կրօնից այլաբանական նմանութեանց՝ հետեւցնեմք և զԱստեղս, պէտք է զատոնք Հրեշտակաց նմանցնել. և արդէն Ս. Գիրք թէ զՀրեշտակս և թէ զԱստեղս՝ Զօրոտրիւնք երկնից (կամ Զօրք) կոչեն. մարդկան՝ ամենէն շատ և խիտ սէկանդ եկած ժողովն՝ զօրաց բանակն է. այսպէս այլ հոգեդիւնաց բազմութիւնն ըմբռնէ, մանաւանդ անոնց զերազոյն զօրութիւնն այլ ճանչնալով, և հոգեդիւնաց հետ առընդութիւնն : Բնութեան տեսարանաց մէջ չկայ պայծառագոյն և վստմագոյն բան զայս լուսաւորաց զօրաբանակ. զգայուն մարդ չի կրրնար չըզմայլիլ՝ պարզ և յըստակ գի-

շեր մի՝ քանի մի վայրեան դիտելով զայն և Չկայ դարձեալ մարդկային հետաքրքրութեան մեծագոյն առարկայ մի, և աւելի քան զուր գիտաց՝ գիտոնց գլուխն տանջող և խոնարհեցընող. երկրիս վրայի առարկաներն այլ չին ճանչար ամբողջապէս, բայց աստեղաց ծանօթութիւնն՝ յետ վեց եօթն հազար սարիւնեբու քննութեանց և գիտից՝ զեռ ոչբերնի գիտութիւն մ'է, մասնաւանդ անոնց ներքին էութիւնն, և շատ չի յուսացուիր համարձակ կարգալ այդ աստուածագիծ երկնից մագաղաթը, զոր ներկայ և հանդերձեալ կենաց և աշխարհաց միջնորդի պէս պարզած է նա մեր դիմաց. և անասկ մի արգիլեալ երկրի պէս Տեսցես և մի՛ մտցես, այսինքն ոչ իմասցիս՝ իսկապէս ի՛նչ են, ինչո՛ւ համար են: Սակայն քանի որ Աստեղք կու ցոյցոյան յերկնից ի վերայ մթնոցած երկրի, պիտի չդադրին մարդկան աչքն ու միտքն իրենց քաշել. ինչպէս իրենցմէ մէկն (Քեւեռն Հիւս.) յինքն կու քաշէ զմտգնիս: Ինչ որ հիմայ է, հարկ է որ ի սկզբան դարուց և ազգաց այլ այնպէս եղած ըլլայ, և զուցէ աւելի այլ՝ հին ժողովրդոց, որք ի սկզբան ծածկուած սուշներու մէջ չէին բնակել, այլ բացօթեայք էին, կամ թեթեւ ծածքով մի. և շատք հուրի և երկրագործ ըլլալով՝ աւելի շատ ժամեր կամ ստեպ՝ դիշերը բաց երկնից տակ և աստեղաց առջիւ գտուէին. և զի զեռ շատ քիչ՝ պատմական դիպուածք եղած էին, մրտքերնին աւելի անզբաղ անարգել կու դիտէր զբնութիւն՝ յերեսս երկրի և երկնից. և զուցէ հասարակարար անոնց ռամիկն քան զՅերս՝ աւելի բան մի կարողար աստեղագրութիւն վրայ. զոնէ՛ ստղոյ է որ իր յիշեալ պարզ անտեսութեան կամ արուեստին համար՝ օգուտ ճարբր անոնց դիրքէն շարքէն, երկնագմէթին մէջ վեր կամ վար տեղափոխուած երեւելէն, որով և զիշերուան պահերն ու ժամերը քիչ շատ կ'որոշէր:

Սակայն ի՛նչ էր հասարակաց հին կարծիքն Աստեղաց էութեան համար. — հասանական է որ ի սկզբան ինչպէս զԱրեւն և զԼուսին ճանչնային, ինչպէս որ կ'ըսեն Ս. Գիլբը, զանոնք այլ նոյնպէս Աստուծոյ գործ և իբր Լուսնի օգնական ճրագք համատարած

գիշերոյ, առանց թափանցելու ծածկեալ զաղտնեաց. իսկ երբ ուղիղ աստուածածանութեան արդասացաւ՝ Աստեղք սկսան աստուածանալ, կամ խմբովին կամ առանձնակի պատուիլ, և պէսպէս կարծիք և առասպելք զոյցացան՝ մանաւանդ աւելի պայծառ աչքի ընկնողաց վրայ. և ձեւացաւ Աստեղագիտութիւն, տարբերութեամբք յայլեայլ ազգս, որոց առաջին համարուին Քաղզէացիք. և թէ ստղոյ է վերայիշեալ կարծիք մեկնչաց և զիտոնց ոմանց՝ նաեւ Հայք. իսկ Յայնք իրենց նորք և զեղեցկասէր ճաշկով՝ ամեն տեսակ առասպել մտուցին, իւրաքանչիւրի (ի հարկէ աւելի երեւելեաց) առանձին պատմութեամբք. շատն այլ միանգամայն՝ Աստղ (Aster) առուումք մէկու մի որդիք ըսին, որք իբր թէ ուզելով Ոլիւմպոսի տիրել՝ շանթահար եղած ըլլան յԱլքամազգայ, ոմանք վար թափուած, ոմանք այլ յերկինս կըլպած կեցած: Թէ՛ ասոնց թէ արեւելեայց առասպելները քննել և յիշել, թէ՛ շատ երկար կ'ըլլայ և թէ՛ ոչ շատ հարկաւոր. բաւական է զիտնայն՝ որ սըտոյն հետ ստղոյ գիտողութիւններ եղած են, և ընդունուած զանազան ազգաց մէջ, և նոյն կամ նման կարծիքներ քանի մի առանձին աստեղաց, ինչպէս Մոչոյրակաց և քանի մի միաժողովից՝ որք Համաստեղագրիւնք կ'ըսուին (Constellations) կամ Պարք աստեղաց:

Մեր ազգին համար վերը ըսուածէն կ'երեւի, և շատ մի Աստեղաց յատուկ անուններն հաստատուի, որ Հայք այլ ունէին բաւական կարգացեալ աստեղագիտութիւն մի, ուղիղ կամ մոլոր. բայց (ինչպէս ոմանք կ'ըսեն քանի մի աստեղաց համար՝ թէ մեծագոյն աստեղ մի կոտորւանք են), Հայոց աստեղագիտութեան այլ միայն կոտորք մնան՝ իրենց լեզուի սեփական աստեղաց անուամբք, զաս ի թարգմանուած անուանց, որոց հետ յայտ է որ աստեղագիտական գրուածներ այլ թարգմանած են՝ յարեւելեայց և ի Յունաց, և մինչև հիմայ գտուին յԱղթարս և ի Տօմարս մանր գրուածք՝ երբեմն անանուն, երբեմն յանուն Քաղզէացոց կամ Գանիելի մարգարէի, քանի մի այլ առանձին հեղինակի կամ մօզի անուն կու տան և Դժուար

է զատել ինչ որ գիտնական է և ինչ որ կրօնական այս աւանդութեանց մէջ. որով ստիպութիւնք ետքի՞նք բացատրելու համար՝ նշանակել և զատալի՞նն, և սուտ և իրաւ Աստեղագաշխութիւնն յիրար խանձել. որ՝ որպէս այլ ըլլայ՝ թէ և շատ անկատար, կրնայ հետաքննութեանց և բարդատութեանց առիթ ըլլալ բանասիրոց. այս մտքով պիտի նշանակեմք հետեւեալքը. նախ յիշեցնելով՝ որ բաց ի յատուկ աստեղագիտութեան գրուածներէ՝ մեր վարդապետը արարչութեան աւուրց վրայօք (առաջին և չորրորդ աւուր) գրելու ա-

Գիշերավար Հին. Լուծ Նոր.
 Այգասող. Լուսաբեր Եղջերու
 Կարմիր ասող Երկաւորի
 Հետ Լուսնին Արասխայր
 Մօտիէգին? Փեռազնտի

վարդան վ. գրէ առ Հիթում Թագաւոր, թէ Ենուլ՝ Սեթայ որդին « արար նշանադիրս, և կոչեաց անուանս Մոլորակաց » (արեօք ի՞նչ լեզուով) :

Մեր հին անուանքն վերոյիշեալ հին ժամանակի մարդկան արուեստը յիշեցնենն, միանգամայն և այն ձեւերը որով նշանակին զմոլորակս՝ փոխանակ անուանին գրելու. Լուծն՝ արօրապող (գետին բանող) եղանց վիզը վրուածը : — Եղջերուն՝ Որոտրութեան. Երկաւորն անծանօթ է, և պէսպէս գրուած կայ, ինչպէս Երկաւոր, զոր մեր բանասիրաց մէկն՝ յամառ Թարգմանէ, կամ Երկաւոր՝ զգետնոց փէշը կամ կախ մասն նշանակելով, որ է Ծոպ. սակայն թուի թէ Երկոր ուրիշ յատուկ բան մի նշանակէ. Մոկաց և Ոչտունեաց միջոց՝ Կարկառ վիճակի մէջ կայ այս անուամբ գիւղ մի. արեւելագէտք Ասորեստանեաց արձանագրութեանց մէջ կարդան Ծրկոչաւտ, բարբառ և պարբարածեւ աշտարակի կամ զիսանոցի նշանակութեամբ : Այսոր ձեւն Աւետիս Ամրեցի իր տօմարագրութեան մէջ այսպէս գծած է ՕՕԾ կըսո՞ց նման՝ թէ ուրիշ բանն : — Արտասխայրն սովորական իմաստով զիսանոց կամ վերարկու է երեւելի և ոչ պարզ գտակ : — Փեռազնտի կամ Փառազնտի որ և Փառասնճտս գրուած է, աւելի անծանօթ և աւելի զիցաբանական կ'երեւի :

սեն՝ այսպէս կ'ընեն երբեմն. և երկրորդ, որ ուղիղ աստեղագաշխութեան մէջ յիշուած անուանքն այլ (մասամբ) շատ հին են և հաւանորէն սազային կամ հեթանոսական մերձաւոր աւանդութիւններէ մնացեալ, որոց սկիզբը զանեղն փափագելի է այլ ոչ յուսալի : Յիշե՛ք նախ Մոլորակ աստեղաց (Planètes) անուանքն, որք եօթն համարուն Արեգական և Լուսնի հետ, և շարթու օրերը նշանակեն. բայց շատ հեղ ասոցմէ զատ՝ հինգ գրուին, և այս են հին և նոր սազային կոչմամբ. զիտեւի է և այս երկանունութիւնը՝

Փայլածու Պարսկ. Տիր Փո. Mercure
 Արուսեակ Նահիտ Vénus
 Հրատ. Սալ Պէհրամ Mars
 Լուսնիթագ Ուրմիզգ, Անհումս Jupiter
 Երեւակ՝ Քեւալան. Չրուան. Saturne

Արտասխայր՝ չորրորդ ի կարգին՝ չորրորդ աւուր արարչութեան յատկացնելով՝ գրէ Չաքարիս կաթողիկոս. « Էջացեցեալ զարեգակն՝ » (Ատուած) եղ ի հասուածն առաջին՝ ըստ երբայական ամսաթուին, և իշխանութիւն աստեղն Արտասխուրի փայլեալ յարեւելից » : — Երենոց գրոց մեկնիչ մի այս անուն մոլորակաց՝ մէկ մէկ տարրական նշանակութիւն կուտայ, ըսելով. « Յոյցք մարդկան արուեստք » են հինգ աստղ. Լուծ՝ հող. Եղջերու՝ Չուր, որ է այծ, և Արտասխայր՝ զմիտսն ասէ որ ի գլուխն. Երկաւոր՝ զգգետան ասէ, որ է Օդն. Փառազնտս՝ գիւրն » : — Հիթումն ուրք (ըստ Անան. Շիրակ.) բարբար համարէին զԼուսնիթագ և զԱրուսեակ, խարդախ կամ շար՝ զԵրեւակ և զՀրատ. « իսկ փայ-

1. Յովհ. Եղնկացոյ անուամբ գրուած է քարոզ մէջ (Համբարձմ.) « Ո՞նք իմաստասեր՝ ա՛նունն թարիմով՝ ասացել է, թէ եօթն Մոլորակն ունի առանձին երկինք. և թէ, հաստատութիւն իւրաքանչիւր երկնից՝ է 800 դուրբէն ճանապարհ մարդկան, և միջոց իւրաքանչիւր երկնիցն՝ նոյն շափոթն՝ 500 դարբէն ճանապարհ է » : — Գր. Տաթեւացի այս իմաստասէրը կոչէ Ռարբի Մովսէս. (Հատ. 2ըմբ. րան, 683) :

2. Ուրիշ հին անուանք այլ կան, բայց որն որին Համեմատինն անտարակոյս չէ :

լածուն՝ հասարակաց բնութիւնն »: — Մոլորակաց ծանօթութիւնն շատ ի հնուց է, և աստեղաբաշխութեան մէջ ծանօթ ամեն ուսանողաց. մեր շագանակ Վարդան վարդապետ (Պատմիչն) Եղիշէի ծննդոց մեկնութիւնէն առած գրէ, թէ « ի վեր քան զԵօթն մարդ » բակ Եօթն այլ աստղ կայ նշանաւորք, » յոյժ ցրտազոյն և ամենեւին սառնամանիք. » և են ի մէջ մուրիցն և անմուրից, և ըզ- » հրաբորբոջ Վերմութիւն արփոյն՝ նորա յին- » քեանս առնուն »: Ուրիշ վարդապետ մ'այլ նոյն Եղիշէէ առած՝ այս Եօթն աստղերը Ամպտր աստեղք կոչէ, որ թուի Անպտր այսինքն անշարժ, ինչպէս համարուի բեւեռն:

Գրեթէ ամենայն ազգաց ծանօթագոյն այս աստղս կամ աստեղք են, երկրիս հիւսիսային կողմի վերեւ. որոյ հակադիր երկնագնաի կողմն այլ կայ նման մի և կ'ըսուին առ մեզ Բեւեռք Հիւս. և Հար. իբրեւ ծայրք առանցից՝ որոց վրայ շուրջ գառնայ երկինքն (փռ. բօլես): Երկրիս մեծ մասին դիտողութեան և նաւարկութեան համար՝ Հիւսիսային բեւեռն եղած է ուղեցոյց. այսոր մօտերն են Բազմաստեղքն (Pleiades), որոց այս կոչումն բնիկ ազգային կամ արեւելեան է թէ յունական, ոչ գիտեմ. Եօթն են այս աստեղք ըստ Յունաց՝ դատերը Ալալասայ և Պլեյոսթի. Յովբայ զոցո մէջ այս անուամբ թարգմանած են մեր նախնիք. « Խելբամու իցես կարգի » Բազմաստեղաց » (ԱԼ, 31): Ոմանք նոյն համարին զԲազմաստեղս և բեւեռին Լծորդ Սայլ կամ Սայլք պարն¹ աստեղաց, որ են Եօթն աստեղք նման հասարակաց ծանօթ կաշարս չորս անուաց, և քեզիի ձեւով երեք այլ շարուած աստեղոք, որք Մեծ և Փոքր Արջ կոչուին յօտար լեզուս, և այսպէս թարգմանին ի մերոց, ըսյոց հին Հայոց մէջ մտած չերեւիք այս յունական այլանբակ մտածութիւնն. որպէս թէ կալիստոյ Արամազդայ մէկ կինն՝ յարջ փոխուած ըլլայ, զոր տեսնելով

իր որպիս Արկաս՝ և չճանչնալով՝ ուզէ նեւ տահար սպանել. Արամազդ՝ մայրասպանութիւնը խտփանելու համար՝ զերկուքն այլ շանթանար կ'ընէ և փոխարկէ այս երկու արջային համաստեղութեանց, որոց մեծն յանուն Արկասայ և արջոյ՝ Այրառոյտս կոչուի: Նախնեաց թարգմանաբար գրուած մի կ'ըսէ. « Հիւսիսային աստեղքն՝ որ յոմանց Արջ » տորոս կոչին, իսկ յոմանց՝ Հեփտաս ազ- » բուն (Ἑπτασ ἀρκτος), իսկ յերկրագործաց՝ » Սայլ, և ի նաւավարաց Բազմոյք »: — Եթէ ըստ ձեւոյ շարուած աստեղացն Սայլ կ'ըսուի, ուրիշ հին և անծանօթ աւանդութեամբ մ'այլ Սայլաբաբի կոչուած է ի մերայոց, թէ նոյն մեծն ըլլայ սա՝ թէ փոքր Արջ: Զարբիտ կաթողիկոս քանի մի ուրիշ համաստեղութեանց հետ յիշէ զայս. « Բեւեռք որ կան ի մէջքն և ի ծիր² և ի կուտակ երկինց՝ փոքր ինչ վերամբարձ քան զՍայլաբաբիդ, և նա է մէջնահաման երկնից նից, ոչ ուրեք ճանապարհապային հեռաւորութեամբ. և համօրէն բոլոր համաստեղաստեղք զնորք պարտուել շրջապային. և Ծիրաթանն՝ որ հաստեղ զերկինս՝ իր բեւ զԵրկր կարին երեւեալ և իբրեւ զկամ շրջապայի, զոր մանկտիդ ի խաղաղ վարեն, այնպէս պարաբերի յարեւելս և յարեւմուտս, ի հիւսիսի և ի հարաւ. և յստաւել խտփեմնէն միաշար և առանց միջոցի երեւին. զոր զեղնուրդ՝ Յարդազդոյ անուանեն »: — Ուրիշ անուամբք այլ կոչուի Սայլն առ մեզ, Ալառռեք, որոյ ստուգաբանութիւն անյայտ, հին հայկական անանդութիւն մի գուշակել տայ Բազմոյք և Բազմոյք, որացէ սա ոչ այնքան բազմութեան

2. Մեր հին տոմարագրաց մէկն կ'ըսէ. « Հաստատորոշում (երկինց) ». երեւի ի միջի նորա Սայլն, որ շրջանակելովն պահէ և գոչէ առանց բանի, և Հայկինն և Բազմաստեղն պատեն ըզկողմն հարաւոյ և ընդդէմ սահմանաց Սայլին՝ որ երեւի ընդ հիւսիսի. և ընթանան ի նմաստեղք յերեկոյնի և ի մէջ գիշերի և առաւօտու. և երթալ ի նմա լուսինն ի ստորնային կողմն, հանդիպի սահմանաց երկրի, և ընտ և պակասի. և զնայ իմա Արեգակն՝ պատելով զամենայն սահմանս նորա »:

1. Ինչպէս այս՝ ուրիշ տեղ այլ կ'ըսէ Զարբարկաթ. « Մեր և մէջ երկինց և հանդէպ Սայլաթաբիդ, ուր և Բեւեռք են զկողմամբ հիւսիսայն »: Եւ յոգնակի գրելով (Բեւեռք) թէ և միայն զհիւսիսայինն յիշէ:

իմաստով՝ որքան բազմելու, իբր սայլալարին նստարան. — Գոռպարք, իբր խամբ մի (և թերեւս կոռարար) աստեղաց. — Վեցկի, և ի ռամկաց Գոռքանի աստղ. Սայլի չորս կողմանց քառակուսի ձեւացընող աստղերն այլ՝ միանգամայն խաչաւսող կոչեն : — Զով, այս այլ կամ զՍայլ կամ զԲազմաստեղա նշանակէ, մեզ անյայտ ծագմամբ, ինչպէս և Աստղա-կոչոյ կոչումն. և աւելի հեթանոսական՝ Ման-կոնք Զրոռանայ, որ պարսկային արայից յի-շեցընէ : Ասքան շատ անուանք այս մի կամ երկու պար աստեղաց՝ մեր բնախր թարգման-չաց ծնունդ չէին կրնար ըլլալ, այլ իրենց հին և հեթանոս հարանց հաւատոց և զանա-զան ականդութեանց, իսկ ասոնց եօթն թիւն՝ հասարակ է ուրիշ ազգաց այլ, և կրնամբ ըսել Ս. Գրոց ականդութեամբ. իսկ առ մեզ ի քրիս-տոնական հաւատս այլ յաճախեալ է ըսելն Եօրանատեղեան խորանք երկնից, իբր եօթն մասն կամ՝ եօթն կարգ երկնից՝ մի քան զմի բարձր :

Վերայգրեալ կաթողիկոսի մէկ յիշած ասա-ղակոյան այլ՝ աստեղաբաշխութեան, ամենէն նշանաւոր մասանց մէկն է, որ յարեւմտեայց Միտր կարին կոչուի՝ ըստ Յունաց առասպե-լաց, իբր Հերայի զԵրակէս դիեցընելու ա-տեն թափթըված կաթէն ձեւացած (!), երկ-նից երես ընդարձակ և երկայն նուազ կամ՝ ձերմակ լուսով տարածութիւն մի, զոր Մի-րածան գրէ կաթողիկոսն, տարբեր ի Միա-ծանէ : Հայք այսոր յատուկ ազգային աւան-դութիւն մ'ունէին, զոր նշանակէ Անանիա Շիրակացի ¹. « Ոմանք յառաջնոցն Հայոց ա-սացին, թէ ի խիտ ձմերանի՝ Վլանգն նարին Հայք՝ գողցաւ զյարբ Բարշամայ Ա-սորեստանեայց նախնոյ. զոր և մեզ սովորե-ցաք բնախօսութեամբ Երզնկոյի հնու անուա-նել ² » : Ահա լուսազոյն առասպել մի քան զպիղծս Յունաց. որպէ՛ զարմանք է՝ զի մա-

սամբ համաձայնին և թորքք՝ Սաման եօրու (ճիշտ Յարդի հնու) կամ՝ օրոռուսու (զոցոց) կոչելով զայն լուսաւոր դասնանան կամ՝ գե-տաննան մասն երկնից : Հին ձանապարհ Արեգական կոչուելն՝ թերեւս ըստ աստղա-բաշխից ոմանց, որք յիրաւի արեգական քիչ մի շեղիլ համարին ի գծէ կենդանականարին : Ասոր նման դարձեալ Յոյքը իրենց Վա-հագնի՝ Հերակլի՝ համար կ'ըսէին, թէ եռա-զուի Գերիոն թագաւորը (Երիւթեայ կղզոյ) և անոր երկզուի պահապան շուրջ սպանելով՝ նախիրները քշեց տորաւ, և անկէ ձեւացաւ այդ երկնային ճամբան. զոր ֆիլոն երբայե-ցին այլ յիշելով՝ « Կամար շուժափ արագըն- » թաց Երզնկոյի կոչէ ըստ մեր թարգ-մանին : Եւ զի յարդն յախոս և ի մուգս » անասնոց դրուի, կաք մարի այլ ըսուե-ցաւ, ինչպէս գրուի ի նախնեաց. « Օղքն երկ- » նայնոցն են կառս մարի, զոր ի հայրէն » բարբառ Երզնկոյի կոչեն, և այս է Մարտր » աման օրոյն թանձրայնեաց, զոր տեսա- » նեմք ի գոյն սպիտակարանի ». յետին բառս նշանակէ բուռ, զան, որով պատեր ճե-մելցընեն : Հեծանոց այլ կոչուած է Երզ-նկոյն, անշուշտ յարդը ժողովոյ և ցրուող փայ-տին համար, զի այսպէս կոչուի սա : Հիմայ այլ ի ռամկաց կոչուի Սանաւոր դարձանա-գոյ, անշուշտ Վահագնի և Բարշամայ նման ականդութեամբ մի :

Միտր կաթին, Միրածան գրուած ի ճառս Զաքար. կաթող. յիշեցուց մեզի զՄիածանն որպէս կոչուի հասարակօրէն առ մեզ՝ այն անձրեւի և լուսոյ շարուածն երկրնքի երեսէն կար ձեւացած՝ Գունագոյն բայց սակաւատեւ գեղեցիկ կամարը, զոր յետ աշխարհալու ջրհեղեղին, կ'ըսեն Ս. Գիրքը, Աստուած իր-բեւ նշան յիշատակի ցուցուց մարդկան, որ այնուհետեւ « Ոչ եւս եղիցի ջրհեղեղ ջուրց՝ » ասպականել զամենայն երկիր՝ զԱշեղն իմ

1. Սա Յունաց այլեւայլ առասպելի գրոյցներն յիշէ, որոց մէկն այլ սգիտացուեցից գրուցածն է, կ'ըսէ, « Առագաստ Պրոսպերուսայ, զոր Սպի- » տակ սուգ կոչեցին Աթենացիք » :

2. Ուրիշ տեղ մ'այլ գրէ. « Ոմանք կարք ծի-րանազոյ ասացին, և կէպէ՝ Հին Արեգական ձա-

» Ասպարհ. և այլք՝ Կասս երկնից, կէպ Պասա- » տամն, կէպ Սպիտակեայ ? և կէպ Յարդա- » գոյ զհետ աստուածոցն. իսկ ոմանք՝ Մարտր » և կայան օրոյն անուանեցին : Այլ ոչ է այդ » ամենայն, այլ թաղիկեալ հուր է, և մանր առ » տեղացն ցղացուսն լուսոյ » :

» եղից յամպս, և եղիցի ի նշանակ յախտե-
 » նական ուխտին ընդ իս և ընդ ամենայն
 » երկիր, և եղիցի ի գումարել ինն զամպս
 » ի վերայ երկրի, երեւեացի Աղեղն իմ յամ-
 » պսս, և յիշեցից զօխտ իմ որ ընդ իս
 » և ընդ ձեզ » : — Այս այլեայլ երեւ-
 ցած զոյներն յօրս՝ Հիբիկ ժաղկան վրայ նըշ-
 մարելով՝ զոր Իուս (Iris) կոչեն Լատինք և
 Յոյնք, զԻուս Հերայի նաժիշտ մի սաեղծե-
 ցին, որոյ հաւատարիմ ծառայութեան համար
 տիկինն փոխարկէ զնա ի ծիածան կամ ի
 վերայ ծիածանի : Հայերէն անունն թէ ծա-
 ալման թէ ցղացման իմաստ կ'ընծայէ . իսկ

պոյներուն մէջ երկուքն աւելի Հայոց աշգին
 զարնելով՝ ուսկօրէն Կարմիր-կանաչ կոչած
 են զօղերեւոյթն, և աւելի յստակ և հասո-
 լակ՝ Ծիրանի գօտի . իսկ այլ աւելի հին և
 անծանօթ կրօնից ասանդութեամբ՝ Տիրկան
 կամ Տիրական գօտի, Թերեւս Տիր դից ըն-
 ծայուած : Աստուածակամար այլ կոչուած է,
 ըստ Անանիայի Երբակ . բայց Թուի ի քրիս-
 տոնէից, ինչպէս հիմայ՝ Աստուածածնի գօտի
 ի ուսկաց :

(Դարայարեկ)

— 360 —

Գ Ա Ն Ձ

Մ Բ Բ Ո Ց Մ Ա Ն Կ Ա Ն Ն Ն Բ Ե Դ Ղ Ե Հ Ե Մ Ի



Արդէն տարւոյս փերրուար ամսաթերթէմ ծա-
 նօթ է մեր ըմթերցողաց Խաչատուր վարդապե-
 տին գանձուց սիմ՝ **Ք-բ-դ Տե-ռ-ը-ը-ր-Ա** խո-
 րագրով յէջ 78 . սոյն գանձս ևս որոյ սկզբնա-
 տաւերը՝ մոյլպէս Խաչատուրյ անունը կը յօդեն,
 ի վայելս մեր յարգոյ ըմթերցողաց՝ կը հրատա-
 րակենք ի Բազմավիպիս :

Արդարև Խաչատուրոյ բամաստեղծական համ-
 անայոյմ չափմ՝ ինքնին ըմթերցողմ կարէ գուշա-
 կել սոյն գանձիս ըմթերցմամբ, յորում կարծես
 իւր աշխոյժն ի բամաստեղծակամիմ՝ սոյն մատաղ-
 երամ մանկանց վարդապոյմ արեամ և մոռա-
 թօթակի գլխոց՝ զգայուն տօնին պահած՝ շնամ-
 ցեր է՝ այնպէս մերկայացնել, որպէս արդեօք
 ցամկալի էր մեզ մկատել և մկարել : Բարքն և
 բանք վարդապետիս*, այնպէս ի սի ծուլած և
 զուգուած է, որ կարծես չուզեն իրարմէ ամջա-
 տիլ, իմպէս և մամկուրմը՝ յիստասլառ փափա-
 գով ի սիմեանց . աւելորդ է մեզ երկադարձանել
 քանի որ մեզմէ աւելի մոյմ իսկ Խաչատուրոյ քը-
 մարն կը խօսի և կ'ազդէ ըմթերցողին սրտին
 սրբագոյն և մրբագոյն թեկելում վիրայ . արդեօք

իմչ ազդեցութիւն որ բանքն կ'ընեն, մոյմն և ա-
 ւելիմ չափսի՝ գործէն մեր վերայ, եթէ իւր բեր-
 մով, իւր ձայնով լսէինք սոյն վայելչահիւս սո-
 դերս . բայց ատենմ ուշ է և եղանակմ կարծեմ
 ինքն իւր հետ վեր տարած, զոր ըլլամք՝ որ գո-
 մեա սոյն պատարկիքս կը լլուծ մեր անյազ իղ-
 ձերը . ուրեմն դու իօստ՝ քմարը քրիստոսալար :

Խօսք .

Խանդաղակաթ սրբօտիւ տնչալի՝
Չեզ տօնեսցուք, ո՛ւռք արմաւենի .
Փունդք աղանեսաց և ձագք տատրակի .
Վայելչազեղ վարդ մանուշակի .
Կայծ և կարմիր արեամբ ծիրանի՝
Պրակեցէք սուրբ զեկեղեցի .
Մատաղ մանկունք որդիք Սիովի,
Տըղայք սիրունք դուք Բեղզաճէմի,
Վրկայք եղէք մեր Տեանն Բիսուսի
Նորածնեալ արթային Բանի .
Բարեխօսեցէք առ Տէրն ամենի [չեմք :
Չմերս ընդունել պատարագ բանի : — Աշա-

Ազդողական ողբն կատարի
ի Հրուաբէլ առ ձեզ վրկայի .
Չայն մեծ գուժի ողբումն աշխարհի
Լալ աղաղակ Հոսմայ քաղաքի .
Չի Հերովդէս ընդ ձեզ մարտի,
Կամի որալ զմանուկն բարի .
Հրաման հանէ ձեզ կոտորածի,
Բառնայ զօծեսայն ի Բեղզաճէմի .
Չձեզ անդրանիկ Հօրն սիրելի

* Ի բաց առեալ քանի մի տեղ՝ ուր կը կրկնէ
 յամզերմ մոյմ բարով, զոր հեղինակէմ աւելի զըր-
 չազրաց ամտաղբութեամ կարելի է վերագրել :